



ԱՄԵՆՈՒՐԵՔ ԶՆՉՈՒՄ Է ԿԱՆՉԸ ՆԵՐԳԱՂԹԻ

ԶԱՐԵԶ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն



մե՛ն անգամ երբ ծոցա աղոթելու իմ Աստուծոյս,
Ի՛մ տունիս մեջ, քե ի՛ր Տունի՛ն, կամ տունի՛ն մեջ օտարներուն....
Ամե՛ն անգամ երբ խնդրեցի ազգիս համար հավատք ու հույս,
Դուն հո՛ն էիր, և ես կարծես միայն քեզմե՛ն էր խնդրեի:

Ամե՛ն անգամ երբ նայեցա մեր պատմության մագաղաթին,
Տեսա հուժկու Տրդատ Արեան, հսկա քարեր ուսին վրա,
Կը բարձրանար տյանարն ի վեր, կարծես ուսին ոչի՛նչ ըլլար,
Ու իր մահուր նակտին վրա ոչ մեկ քրտինք կը փալկար:

Կրկին տեսա Միածինին աղավակերայ էջեր լույսե,
Քու նորաշեն ու խնկաբոյր գմբեթներուդ սրտին վրա,
Տեսա վարեն Լուսավորչին մաքրամաքուր դեմքը բարի,
Ու Տրդատին ժպիտը լուռ, ուր օրհնություն մը կը ծփա:

Տեսա ինչպես մեր ջանն անգամ կը պարուրեր քո մշուշով
Երբ մենք հզոր աշխարհակալ քաղաքներ իսկ ունեինք,
Ու քեզ տեսա այն օրերուն երբ մենք լռած ստրուկ էինք,
Ու քեզ համար երբ կոռուցանք քե՛ մարդուն դեմ և քե փրկին:

Ես տեսա քեզ այս աշխարհի նամբաներուն քովն ու վրան,
Իմ մոռնված ու հոգնատանջ ժողովուրդիս հոգիին մեջ,
Դուն հույս էիր, դուն ապավեն, դուն հավատքի փառո՛ս եղար,
Ու մեզ քերիւր մինչև այս նենգ քսաներորդ դարու շեմքին:

Ու հիմա ո՛վ անհիշաչար ու երկնահո՛ւ պ էջմիածին,
Լսե՛ խոսքը պաղատագին քո գաղթական բանաստեղծին,
Լսե՛ երգը, լսե՛ հոգին, լսե՛ ողբը քաղմալեզու,
Ու պատմե՛ զայն ձեր աշխարհքի աստուածներուն ու Տերերուն:

Ըսե՛ անոնց քե ամենքս ա՛լ հյուժած ենք ու ձանձրացեր....
Թեև մենք հոս ու ամե՛ն տեղ պիտի ապրինք ու ստեղծենք,
Թեև պիտի կո՛ւրծք տանք միևակ, դարերուն դեմ ու աշխարհին...
Ըսե՛ անոնց, քե ամենքս ա՛լ հյուժած ենք ու ձանձրացեր:

Ըսե՛ անոնց քե մենք հիմա կը սպասենք ձեր մե՛կ նշանին.
Թե պատրաստ ենք, քե մենք հա՛յ ենք, տառապած ենք ու փրա՛լար,
Ըսե՛ անոնց քե անկեղծ է խոսքը այս եո՛ր բանաստեղծին
Ախ՛ շո՛ւտ բռե, անապարե ով փրկարա՛ր էջմիածին:

Հալեպ